

**ԶՄՐՈՒԹ ՂՈՒՇԻ ՀԵՔԻԱԹԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի),
Լոռու բարբառ (խոսվածք)**

Ժամանակով մի թագավոր ա ըլնում մի քաղաքում: Մի Զմրութ ղուշ էդ թագավորի հետ ծանոթ ա ըլնում, միշտ գալիս ա իրա տունը, հետը հաց ա ուտում, գրից անում, գնում: Օրվա մի օրը թաքավորն ասում ա.— Զմրութ ղուշ, ամեն բանը ջընջվում ա, ու աստծու գրած գիրը խ'իստ¹ չի ջնջվում:

Զմրութ ղուշն ասավ.— Ե՛ս կջնջեմ:

Թագավորն ասավ.— Զմրութ ղուշ, ես էլ հենց գիտեմ, թե շատ մեծ թաքավոր եմ, ես որ կարում չեմ ջնջեմ, դուն կարա՛ս:

Զմրութ ղուշն ասավ.— Թագավո՛ր, որ ջնջեմ, ի՞նչ ես տալիս ինձ:

Թաքավորն ասավ.— Դուն էլ ես թաքավոր, ես էլ եմ թաքավոր, քեզ ի՞նչ տամ, որ լավ ըլի: Քեզ մի բա՛ն կասեմ՝ է՛լ քու աղաքին ասիլ չեմ, թե ես թաքավոր եմ, եթե ջնջես:

Զմրութ ղուշն ասավ.— Դեռավոտը մտիկ արա դուն:

Մի ուրիշ գեղեցիկ մի հըրսանիք գեր ռավոտը: Զմրութ ղուշը գնաց, ձիու վրիցը հարսին վեկալավ ու փախավ: Հըրսանքավորը մնաց եղնուց մտիկ անելիս:

Ասին.— Տեր աստոծ ջա՛ն, մենք աշխարքի մեջ ըթավուր բան էլ չէինք տեհե:

Հրսանքավորը շատ փոշմանած վի կացավ գնաց իրանց տուն:

Թաքավորը շատ միտք արավ ու թվանքը վի կալավ ասավ.— Էս աշխարքիս միշտմը յա պտի մեռնեմ, յա պետք ա իմ նշանածին գտնում:

Գլուխն առավ, ընկավ չուրը, կորավ: Թե մեկ տարի ման էկավ, թե երկու տարի ման էկավ, էդ աստոծ ա գիդում, գնաց, մի հեռու աշխարք, մի մեծ քարի տակի աղբիր կար, ձեռին հաց ու պանիր ուներ, նստեց էն աղբիրի վրա, թե հաց ուտի: Հացը որ կերավ, ծարավ էր՝ կռացավ, որ ջուր խմի, տեհավ, որ մի հարսի գլուխ ջրի միջում էրևում ա: Գլուխը վեր քաշեց, բանձր քարին մըտիկ արավ, տեհավ, որ քարի կիսումը մի կնիկարմատի գլուխ ա էրևում, էն քարի դեմ ու դեմը մի ուրիշ քար էլ կար, տղեն գնաց էն քարի գլուխն էլավ, ձեն էրետ՝ հարսը դուրս էկավ ջրի միջուցը:

Ասավ.— Ո՛վ եմ, ինձ ճընանչու՞մ ես:

Ախչիկը լաց էլավ ընդիան թե.— Խի՞ստ չեմ ճընանչում, իմ նշանածըս ես՝ Վարդանը:

— Բա ո՞նց անենք,— ասավ,— որ յա դու գաս ըստեղ, յա ես գամ ըստեղ:

Ախլիկն ասավ.— Գալու դուրթար չկա:

Ասավ.— Բա ո՞նց պըտի ըլի:

— Դու արի, Վարդան ջան, իմ արթնակ քարի տակը տապ արա, որ մութն ա՝ ղուշը գալիս քեզ տենի ոչ: Ես բալքի քեզ մի հնարքով բերեմ իմ կուշտը:

Դա լսեց, գնաց մտավ քարի տակին, տապ արավ, բիգունը մութն էր՝ ղուշն էկավ, տեհավ հարսը շատ տխուր ա, ասավ.— Հա՛րսը, ամեն հետ ուրախ էիր, բիկունս խի՞ստ էս տխուր դուն:

Հարսն ասավ.— Զմրութ ղուշ, ընդուր հմար եմ տխուր, որ էս քու հին բնիցը ֆոտ ա գալի, ինդդում եմ, որ ռավոտը դըվեր գձես քարի տակը:

¹ Բնագրում գրված է **խիստ** և կից փակագծում բացատրված՝ ինչի—Ծ. Կ.:

— Հարսի, հըլէ ըտուր հմար ե՞ս տխուր, ռավոտը, դարդ մի անի, անպատճառ ես դըվեր կգձեմ: Մի կենտ, հարսի՛, խնդրում եմ քեզ, որ ինձանէ իսանի ֆոքի չուզես, թե չէ՝ աշխարքիս էրեսին ինչ որ ուզես, ես քեզ հմար կճարեմ:

— Շատ լա՛վ, — ասավ Ջմրութ ղուշ, ոնց որ կասես, ես էլ ընենց կանեմ:

Ռավոտը լիսացավ, Ջմրութ ղուշը վի կալավ ու դըվեր գձեց էն բունը ու վի կացավ եղինքը գնաց թաքավորի կուշտը:

Ասավ թաքավորին Ջմրութ ղուշը, թե. — Բա խի՞ստ չնշեցի աստու գրածը:

Թաքավորն ասավ Ջմրութ ղշին, թե Ջմրութ ղուշ, ինչ շատ խըտատում ես, դեռ մի տարի ա անց կացել:

Ախչիկն ընդի ձեն էրետ մարդին, թե. — Վարդա՛ն, դուս արի:

Դուս էկավ:

Ասավ. — Մտի էդ դըվեր գձած բնի ճախի մեջը. հենց արա, որ ղուշը քեզ տենա ոչ:

Վարդանը մտավ էդ բնի ճախի մեջ, տապ արավ: Մթնեց, Ջմրութ ղուշը էլի էկավ: Էկավ տեհավ, որ հարսը էլի տխուր ա:

— Հա՛րս, — ասավ, — հմի խի՞ստ ես տխուր:

Հարսն ասավ. — Ջմրութ ղու՛շ, քեզ գլխացավանք եմ տալի, խնդրում եմ էս մի հետ էլ ինձ լսես, էլ էդ բանը անիլ չեմ:

— Ի՞նչ ա, հա՛րս, ի՞նչ ես ուզում:

Ջմրութ ղուշ, դու գիտես, որ ըստի մարդ չկա, ոչ կնիկարմատ կա, ոչ տղամարդ, ու՛մ հետ խոսիմ, ու՛մ հետ ասեմ, որ օրս անցկացնեմ. խնդրում եմ, որ քու էն հին բունը ետ բերես իրա տեղը դնես:

— Ի՞նչ ես անըմ, ախչի՛:

— Բա՛, արմանեի քու էն բերած բաների վրա:

— Է՞դ ես մտածում, հարսի՛, իմ պարտքս ըլի ռավոտը ետ բերեմ իրա տեղը դնեմ, օղանց գամ ոչ տենում, թե դու տխուր ես:

Ռավոտը լիսացավ, Ջմրութ ղուշը գնաց, չանգերը գձեց տակը, տղեն միչումը, էբեր էդ ընդի, ախչկա կողքին էդիր, էթող ու գնաց թաքավորի կուշտը:

Էն մարդը դուս էկավ, էդ հարսի հետ սկսեց հանաք ու շիտակ խաղ անիլը: Բիզները, որ ղուշը գալիս ըլեր՝ էն բնումը տապ աներ, ռավոտները ղուշը որ գներ՝ տղեն դուս գեր: Մի տարի էդ դայդի ապրեցին, մի տարեն վրա հարսին մի տղա էրեխա էլավ: Աստծու հնարք էր, որ ղուշը ոչ նրան ցավելիս տեհավ, ոչ ըլխին բերելիս տեհավ: Աստված բանը ընենց բռնեց, որ ցերեկով էլավ, ղուշը ըտի չէր:

Ըրեխին փթաթեցին, բարուր շինեցին, տեհան մթնում ա, ղշի գալու վախտն ա, ըլխին լավ ծիծ էրետ էդ կնիկը:

Ասավ. — Տեր աստո՛ճ, քշերս իմ էրեխին հենց պահես, որ մինչի ռավոտը ղշի գնալը մի հատ ձեն չհանի:

Ըտենց էլ էլավ. քշերը էրեխեն լաց չելավ:

Ռավոտը վի կացավ ղուշը, էդ գնաց թաքավորի կուշտը, ասավ. — Թաքավորն ապրած կենա, տեհա՞ր, ասծու գրած գիրը ջնջեցի:

Թաքավորն ասավ. — Ջմրութ ղու՛շ, հըլա էրկու տարի ա անց կացել, հըլա էլ համփերենք:

Վերջին մտիկ արա, Ջմրութ ղու՛շ:

Ջմրութ ղուշը թաքավորին ասավ. — Հենց կորավ, ոնց որ հերվա ձինը:

Հարսն ու տղեն ըտի ապրեցին էդ հանգին մի տարի էլ: Էդ հարսը մի տարու վրա էդ էրկուֆոքիսացավ: Մնաց մինչի իրա ժամանակի օրը, աստծանէ հրաման էր՝ ցերեկով ցավեց,

ցերեկով երեխեն եբեր, որ դուշը մի բան գլխի չէլավ, թե չէ, որ գլխի էր էլել, թիքա-թիքա կըկտորեր չիմնին էլ:

Էն մի բարութիւն էլ էն մնի պես փթաթեցին, է՛լ ցերեկը ծիծ ա տալի, երկուսին հերը վեր ա ունում, մտնում հին բնի ճախի մեջը, տապ անում:

Տարի ու կես էլ դրան ծիծ էրետ:

Օրվա մի օրը եղ գնաց Զմրութ դուշը թաքավորի կուշտը, ասավ.— Թաքավորն ապրած կենա, տեհա՞ր, որ աստծու գրած գիրը ջնջեցի՞:

Թաքավորն ասավ.— Զմրութ դո՛ւշ, մկա՞ն էն հարսին դեռ պըհում ե՞ս:

Ղուշն ասավ.— Բա ի՞նչ եմ անում:

Թաքավորն ասավ.— Սաղ ա՞:

Զմրութ դուշն ասավ.— Բա ի՞նչ պտի ըլի. քեֆը դո՛ւ գ, ասում ա, ծիծաղում իրա համար:

Թաքավորն ասավ.— Ես չեմ հավատում, թե հարսը դեռ սաղ ա:

Զմրութ դուշն ասավ.— Բա ին՞չ կըլիմ արած, որ սաղ չի ըլի:

Թաքավորն ասավ.— Զմրութ դուշ, թե դրուստ ես ասում, հըլա գնա հարսին բի, տենամ իմ աչքովս՝ սաղ ա՞, թե չէ: Էլ օշով չի տենալ ինձանից եղը: Էլ եղ կտանես, կպըհես, ոնց որ չվել էսօրի պըհել ես:

Ղուշն ասավ.— Աչքի՛ս վրա, թաքավորը ապրած կենա: Էս սհաթին գնամ ու բերեմ: Դուն հենց գիտես, թե ես սըպանել եմ, հա՞:

— Հա՛, Զմրութ դուշ, ես հենց գիտեմ էս հինգ տարեն մեջը նրան վաղ ես սըպանե:

— Դե տե՛ս, ես գնամ, էս սըհաթիս բերեմ:

Ղուշը գնաց, դեռ հեռու էր, որ երեխեքը, կնիկը դշի թնի ձենն իմացան, ըրեխեքը վի կալավ հերը, բնի մեջը տապ արին:

Կնիկն ասավ.— Վարդան ջա՛ն, չվելի դուս չգաս որ՝ ես ձեն տամ, նոր դուս արի: Ղուշն ես վախտին ի՛նչ գալիս ա, դրա մեջը մի բան կա:

Ղուշն էկավ հարսի կուշտը:

Հարսն ասավ.— Վա՛յ, Զմրութ դուշ, զարմացա ես:

— Հարսի ջա՛ն, խի՞ ստ ես զարմանում:

— Վայ, բա դու՛ն ով, էս վախտին գալն ով:

— Հա՛, հարսի, գիտե՛ս ինչի եմ էկե: Մի թաքավորի հետ մառջ եմ բռնե, որ թաքավորը ասում ա՝ աստծու գրած գիրը ջընջվիլ չի, էսօր գնացի թաքավորի կուշտը, ասավ. թե.— Ես հվատում չեմ, թե հարսը սաղ ա, էկել եմ քեզ տանեմ թաքավորին շանց տամ:

— Դուն գիտես, Զմրութ դո՛ւշ, վա՛յ թե տանես, թաքավորը ինձ սըպանի:

— Զե՛, հարսի, խի՞ ստ ես վախում, ես քու կշտին, նա կարա քեզ սըպանի՞:

Հարսն ասավ.— Դու գիտես, Զմրութ դո՛ւշ:

Հարսին վիկալավ ու տարավ թաքավորի կուշտը:

Թաքավորը տեհավ, որ հարսին էրի իրան կուշտը: Հարսին հարցըրուց.— Հա՛րս, քես դուշը ո՞նց ա պըհում:

— Փա՛ռք աստծու,— ասավ,— շնորհակալ եմ դրանից, ո՛չ մի բանս պակաս չի անում, ինչ որ ուզում եմ՝ կատարում ա:

Թաքավորն ասավ.— Հարսի՛ սրա տները ի՞նչ թավուր են:

Հարսն ասավ.— Թաքավորն ապրած կենա, դրան տուն չունի:

— Բա ինչու՞ մն եք ապրում:

² Լոռու բարբառին ոչ հասունկ բառ—Օ. Կ.:

Ասավ.— Մի բարձր քարի միջում մի էր կա, էն էրի միջում ինքը բուն ա շինել, մեմենձ գերաննով, մեմենձ չախերով. շատ զարմանալի մի բան ա:

Ասավ.— Մինն ա՞, թե էրկուսը:

Հարսն ասավ.— էրկուսն ա:

Թաքավորն ասավ.— Հարսի՛, ո՞րն ա շատ զարմանալի:

Հարսն ասավ թե.— Աշխարքումս դրա հին բնի պես զարմանալի քու ամարաթն էլ չի լի:

Թաքավորն ասավ.— Ձմրութ՝ դու՛շ, աստոժ միջնորդ, էս բլանիքը էդ էլ օթախը, հարսին դիր էդ օթախումը, դուռը փակի, բլանիքը վիկալ, թե ինձ մավա չես գնում, մի՛ գնա հլա են բունը բի՛, հլա տենունք էն ի՞նչ թավուր բան ա, որ հարսը դրանից շատ ա զարմանում:

Դու՛շը հարսին էդիր օթախումը, դուռը փակեց, բլանիքը զըցեց շըլինքը, գնաց բունը վի կալավ, էկավ: Էբեր թաքավորի դռանը վեր էդիր:

Թաքավորն ասավ.— Հարսին հլա դուս բի:

Դուս բերուց:

Թաքավորն ասավ.— Հարսի՛, հին բունն էս ա՞:

Էդ ա,— ասավ,— թաքավորն ապրած կենա:

Հարսին թաքավորն ասավ.— Սրա ընչի՞ ցն էս շատ արմանում:

Թե.— Դրա էդ գերաննուցը:

Թե.— Չէ, էդ չեմ հարցնում,— ասավ թաքավորը,— հարսի՛, վախենու՞մ էս, էս թաքավոր եմ, իմ կշտին վախիլ մի: Ով որ կա միջումը, ձեն տու, թող դուս գան:

Ձմրութ՝ դու՛շն ասավ.— Թաքավո՛ր, ո՞վ կա միջումը:

Ասավ.— Էդ քու բանը չի:

Հարսը գնաց ձեն էրետ, թե.— Վարդա՛ն, քու էրեխեքդ վի կալ, դուս արի:

Մին էլ տեհավ Ձմրութ՝ դու՛շը, որ բնի միջիցը մի մարդ, էրկու տղա էրեխա, իրան թվանքով, իրան խանչալով, դուս էկավ: Որ դուս էկավ, շատ արմացավ Ձմրութ՝ դու՛շը:

Թաքավորն ասավ.— Ձմրութ՝ դու՛շ, բա ասիր՝ աստծու գրած գիրը ջնջել եմ, էս մի դուժին խալիսը կջնջվի՞:

Ձմրութ՝ դու՛շը հարցրուց հարսին.— Քու թախսըրդ կբախշեմ քեզ, դրուստն ասա, հըլա տենանք էդ ո՞նց ա էլել:

Թաքավորն ասավ.— Հարսի՛, վախիլ մի, ինչպես էլել ա՛՝ էնենց էլ ասա:

Հարսն ասավ.— Ձմրութ՝ դու՛շ, հինգ տարի սրանից առաջ, որ էս հին բունը դըվեր գձիլ տվի քարի տակը, ընդով էս իմ նշանածը մտավ մեջը. ետ որ ռավոտը ասի՝ դուս բի, միջումն էր. էս հինգ տարի ա, որ ինձ հետ ընդի ապրում ենք, էս էրկու տղեն էլ էրումն էն էլել մեզանից:

Թաքավորն ասավ.— Ձմրութ՝ դու՛շ, որ հինգը տարի սրանց էրումը պըհել էս, հիմի որ վեր թողունք ու դենն անենք առանց ապրուստի, էդ էրեխեքը մեղք չե՞ն ըլիլ բա: Արի դրանց մի բավականութին տանք, որ գնան աշխարքի մեջ ապրեն:

Դրանք բերին ըտրան ընչանք բան տվին որ՝ կես թաքավորութենի չափ, նորից լավ հրսանիք արին, հորն ու մորն էլ կանչեցին, հասցրին իրանց մուրազին:

Բարին ըստի, չարին ընդի:

Աստծանե իրեք խնձոր վեր գա. մինն՝ ինձ, մինն՝ ասողին, մինն էլ ալամ աշխարքին: